ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/19904-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ ընդունված «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-823-17.04.2024-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը՝

1. Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բոանդակությամբ՝ «***Հոդված 1.*** «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետը «քրեակատարողական ծառայողների» բառերից հետո լրացնել «, հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման աշխատողների, արտաքին հետախուզության ծառայության ծառայողների» բառերով:»

   Կատարվող փոփոխությունը խմբագրական բնույթի է, անհրաժեշտ է միայն լրացնել, որ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման աշխատողների, արտաքին հետախուզության ծառայության ծառայողները ևս օրենքի իմաստով չեն հանդիսանում վարձու աշխատող, քանի որ նրանց վերաբերյալ տվյալները սահմանափակ օգտագործման են:

2. Նախագծի 6-րդ հոդվածում «մասում «եթե դիմումը» բառերից հետո» բառերը փոխարինել «մասից» բառով:
3. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում կատարել լրացում և «ենթաօրենսդրական» բառերից հետո լրացնել «նորմատիվ» բառերը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության ավագ մասնագետ
Հեռ. 010 515 403 077 78 78 21